ԱՎԴ1/0089/01/25

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

26 մայիսի 2025 թվական ք.Երևան

Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Հ.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՎԴ1/0089/01/25 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2025 թվականի մայիսի 20-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2025 թվականի ապրիլի 9-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Արթուր Սեյրանի Խաչատրյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Էդգար Գագիկի Ջավրշյանի

վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Պարգև Նվերի Վարդանյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, Մոհսեն Հոսեյնալի Ռահիմիի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և Սևակ Սամվելի Ջոհրանյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով թիվ 26130824 (ԱՎԴ1/0089/01/25) քրեական վարույթը:

2. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի ապրիլի 21-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ1/0089/01/25 քրեական վարույթն ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2025 թվականի մայիսի 2-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի մայիսի 20-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ1/0089/01/25 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի մայիսի 21-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. 2025 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ Արթուր Խաչատրյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 399-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա կատարել է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների մաքսանենգություն՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների ապօրինի*

տեղափոխում՝ մաքսային հսկողությունից թաքցնելու և թմրամիջոցների տեղափոխման համար սահմանված արգելքը խախտելու միջոցով, ինչպես նաև շահադիտական դրդումներով նախնական համաձայնությամբ խմբի կազմում իրացնելու նպատակով ապօրինի տեղափոխել և պահել է առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ:

Այսպես.

Արթուր Սեյրանի Խաչատրյանը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, մասնավորապես՝ չունենալով բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ կամ օրենքով նախատեսված որևէ նպատակով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու՝ թմրամիջոց ձեռք բերելու, պահելու, տեղափոխելու և իրացնելու թույլտվություն, շահադիտական դրդումներով նախնական համաձայնության է եկել քննությամբ դեռևս չպարզված Իրանի Իսլամական Հանրապետության բնակիչներ ոմն Ադել Հազրաթիի և Ալիի հետ թմրամիջոցների մաքսանենգություն կատարելու և ՀՀ տարածքում առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ ապօրինի իրացնելու վերաբերյալ, ինչն իրագործելու նպատակով՝ 2024 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև նույն թվականի սեպտեմբերի 19-ն ընկած ժամանակահատվածում, գտնվելով Իրանի Իսլամական Հանրապետությունում, վերջիններից ապօրինի ձեռք է բերել «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերը (...) սահմանելու մասին» 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման հավելված N 1-ով հաստատված՝ թմրամիջոցների ցանկի 81-րդ կետով և 110-րդ կետով նախատեսված առանձնապես խոշոր չափերով՝ համապատասխանաբար «Մարիխուանա» տեսակի՝ ընդհանուր 3506,1 գրամ քաշով (945,9+490,9+560,9+465,9+21,57+90+930,93) թմրամիջոցների պարունակությամբ 7 փաթեթներ և «Մեթամֆետամին» տեսակի՝ ընդհանուր 2940 գրամ քաշով (995+995+500+450) թմրամիջոցների պարունակությամբ 4 փաթեթներ՝ փաթեթավորված «1», «W B X», «R+R», «E», «X X» և «S» տարբերանշաններով 6

փաթեթներում, 7-րդ փաթեթն՝ առանց տարբերանշանի, ինչից հետո փաթեթների մեծ մասը մշակվել են կարմրավուն գույնի աղացած, չորացված պղպեղին բնորոշ հոտով փոշենման զանգվածով:

Դրանից հետո շարունակելով ձեռք բերված հանցավոր մտադրության իրականացումն՝ Արթուր Խաչատրյանը 2024 թվականի սեպտեմբերի 19-ին թմրամիջոցների նշված փաթեթներն իր կողմից վարած «KAMAZ» մակնիշի «32 US 322» հաշվառման համարանիշի ավտոմեքենայով՝ Հայաստանի Հանրապետության պետական սահմանով մաքսանենգությամբ՝ մաքսային հսկողությունից թաքցնելով և թմրամիջոցի տեղափոխման համար սահմանված արգելքը խախտելով՝ ԻԻՀ-ից ապօրինի տեղափոխել է դեպի Հայաստանի Հանրապետության տարածք, ապա 2024 թվականի սեպտեմբերի 22-ին՝ ժամը 22:00-ից մինչև 23:30-ն ընկած ժամանակահատվածում, հիշյալ թմրամիջոցների փաթեթներն իրացնելու նպատակով շահադիտական դրդումներով ապօրինի պահել է Արարատի մարզի Պարույր Սևակ բնակավայրից դեպի Տիգրանաշեն բնակավայրի ուղղությամբ տեղադրված ցուցանակից մոտ 500 մետր հեռավորությամբ գտնվող թաքստոցում, Տիգրանաշեն բնակավայրի վերջնամասում գտնվող թաքստոցում, Տիգրանաշենի ոլորանների 79-րդ կիլոմետրի մոտակայքում գտնվող թաքստոցում, Տիգրանաշենի ոլորանների միջնամասում գտնվող թաքստոցում, Տիգրանաշենի ոլորանների 84-րդ կիլոմետրի մոտակայքում գտնվող թաքստոցում, Երևան-Մեղրի ավտոմայրուղու 87-րդ կիլոմետրի մոտակայքում գտնվող թաքստոցում, Պարույր Սևակ բնակավայրի սկզբնամասի մոտակայքում գտնվող թաքստոցում, այնուհետև, շարունակելով հանցավոր մտադրության իրականացումը համաձայն վերը նշված անձանց հետ ձեռք բերված պայմանավորվածության՝ թմրամիջոցների գտնվելու վայրերը լուսանկարել ու աշխարհագրական տեղորոշումների հետ «Whatsapp» հավելվածով ուղարկել է Իրանի Իսլամական Հանրապետության տարածքից գործող խմբի անդամ ոմն Ադել Հազրաթիին, որից հետո անմիջապես ձերբակալվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից: (…)»[1]:

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 15, թերթեր 105-108:

5.1. 2025 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ Էդգար Ջավրշյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա նախնական համաձայնությամբ խմբի կազմում իրացնելու նպատակով շահադիտական դրդումներով ապօրինի ձեռք է բերել, պահել և տեղափոխել առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց:*

(…)

Էդգար Գագիկի Ջավրշյանը խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, մասնավորապես՝ չունենալով բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ կամ օրենքով նախատեսված որևէ նպատակով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու՝ թմրամիջոց ձեռք բերելու, պահելու, տեղափոխելու և իրացնելու թույլտվություն, նախնական համաձայնության է եկել ապօրինի թմրաշրջանառություն իրականացնող «SCREAM OiL» անվամբ տելեգրամյան խանութ-հարթակը ղեկավարող քրեական վարույթով չբացահայտված անձի հետ և շահադիտական դրդումներով՝ նշված անձի հանդեպ ունեցած 16000 ԱՄՆ դոլար գումարային պարտքի մարման նպատակով՝ այդ խանութ-հարթակը ղեկավարող անձից ստանալով Արարատի մարզի Պարույր Սևակ բնակավայրից դեպի Տիգրանաշեն բնակավայրի ուղղությամբ տեղադրված ցուցանակից մոտ 500 մետր հեռավորությամբ գտնվող թաքստոցի տեղորոշումը, թմրամիջոցի փաթեթի լուսանկարը և 30.000 ՀՀ դրամ գումար՝ ավտոմեքենա վարձակալելու համար, 2024 թվականի սեպտեմբերի 23-ին՝ ժամը 01:00-ի սահմաններում, վարձակալած «Volkswagen Golf» մակնիշի 37 TP 671 հաշվառման համարանիշի ավտոմեքենայով գնացել է նշված վայր, ինչից հետո Էդգար Ջավրշյանը, շարունակելով նշված տելեգրամյան էջը վարող անձի հետ ձեռք բերած հանցավոր մտադրության իրականացումը՝ նշված թաքստոցից իրացնելու նպատակով շահադիտական դրդումներով ապօրինի ձեռք է բերել Արթուր Խաչատրյանի կողմից տեղադրված «S»

տարբերանշանով՝ ՀՀ Կառավարության «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերը (…) սահմանելու մասին» 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման հավելված N 1-ով հաստատված՝ թմրամիջոցների ցանկի 81-րդ կետով նախատեսված առանձնապես խոշոր չափերով՝ 930,93 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի պարունակությամբ փաթեթը, որից հետո վերը նշված թմրամիջոցի փաթեթը պահել է նշված ավտոմեքենայում և չենթարկվելով ՀՀ ազգային անվտանգության ծառայողների կանգառ հրահանգին՝ տվյալ վայրից դիմել է փախուստի ապօրինի տեղափոխելով վերը նշված թմրամիջոցի փաթեթը, ինչից հետո նույն օրը՝ ժամը 05:40-ի սահմաններում, Արարատի մարզի Արտաշատ համայնքում գտնվող արագաչափ սարքի մոտակայքից, ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից Էդգար Ջավրշյանը ձերբակալվել և տեղափոխվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության Արարատի մարզային վարչություն, իսկ առանձնապես խոշոր չափերով՝ 930,93 գրամ հաստատուն չոր քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի «S» տարբերանշանով փաթեթը հայտնաբերվել և վերցվել է «Վոլկսվագեն Գոլֆ» մակնիշի 37 TP 671 հաշվառման համարանիշի ավտոմեքենայում 24.09.2024 թվականին կատարված խուզարկությամբ: (…)»[2]*:*

5.2. 2025 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ Պարգև Վարդանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա նախնական համաձայնությամբ խմբի կազմում իրացնելու նպատակով փորձել է ապօրինի ձեռք բերել առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցներ:*

(…)

Պարգև Նվերի Վարդանյանը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 15, թերթեր 137-141:

որոշման պահանջները, մասնավորապես՝ չունենալով բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ կամ օրենքով նախատեսված որևէ նպատակով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու՝ թմրամիջոց ձեռք բերելու և իրացնելու թույլտվություն, նախնական համաձայնության է եկել քննությամբ չպարզված անձի հետ՝ Երևան-Երասխ-Մեղրի միջպետական ճանապարհի Տիգրանաշենի ոլորանների 84-րդ կիլոմետրի մոտակայքում գտնվող թաքստոցում առկա առանձնապես խոշոր չափերով «Մեթամֆետամին» և «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցները իրացման նպատակով ապօրինի ձեռք բերելու վերաբերյալ, ինչն իրագործելու դիտավորությամբ նախնական համաձայնությամբ խմբի կազմում գործող քննությամբ չպարզված անձից 2024 թվականի սեպտեմբերի 22-ին ստանալով նշված թաքստոցի գտնվելու վայրի աշխարհագրական կոորդինատները և «W B X» տարբերանշաններով թմրամիջոցների երեք փաթեթների լուսանկարները՝ Ջոն Հարությունի Մելիքսեթյանի և Նարեկ Դավթի Գրիգորյանի հետ՝ վերջինի վարած «Hyundai Elantra» մակնիշի «37 BP 644» հաշվառման համարանիշի ավտոմեքենայով Երևան քաղաքից ուղևորվել է դեպի նշված վայր, ինչից հետո Պարգև Վարդանյանն իրացնելու նպատակով փորձել է ապօրինի ձեռք բերել Արթուր Խաչատրյանի կողմից նշված վայրում գտնվող թաքստոցում տեղադրված «W B X» տարբերանշանով՝ ՀՀ Կառավարության «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերը (...) սահմանելու մասին» 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման հավելված N 1-ով հաստատված՝ թմրամիջոցների ցանկի 81-րդ և 110-րդ կետերով նախատեսված՝ համապատասխանաբար առանձնապես խոշոր չափերով՝ 490,9 գրամ հաստատուն քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի մեկ փաթեթը և առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 950 (500+450) գրամ քաշով «Մեթամֆետամին» տեսակի թմրամիջոցի երկու փաթեթները՝ փաթեթավորված միասին մեկ փաթեթում, սակայն Պարգև Վարդանյանի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը վերջինի կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված չի իրագործվել, քանի որ Պարգև Վարդանյանը 2024 թվականի սեպտեմբերի 23-ին՝ ժամը 06:30-ի սահմաններում, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալվել և

տեղափոխվել է ՀՀ ազգային անվտանգության ծառայության Արարատի մարզային վարչություն, իսկ հիշյալ տեսակի թմրամիջոցների փաթեթը հայտնաբերվել են 2024 թվականի սեպտեմբերի 23-ին Տիգրանաշենի ոլորանների 84-րդ կիլոմետրի հատվածում կատարված դեպքի վայրի զննության ընթացքում: (…)»[3]*:*

5.3. 2025 թվականի ապրիլի 3-ի որոշմամբ Մոհսեն Ռահիմիի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա նախնական համաձայնությամբ խմբի կազմում իրացնելու նպատակով շահադիտական դրդումներով փորձել է ապօրինի ձեռք բերել առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց:*

(…)

Մոհսեն Հոսեյնալի Ռահիմին, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, մասնավորապես՝ չունենալով բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ կամ օրենքով նախատեսված որևէ նպատակով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու՝ թմրամիջոց ձեռք բերելու և իրացնելու թույլտվություն, նախնական համաձայնության է եկել Սևակ Սամվելի Ջոհրանյանի և քննությամբ չպարզված այլ անձանց հետ՝ Երևան-Երասխ-Մեղրի միջպետական ճանապարհի Տիգրանաշենի ոլորանների միջնամասում գտնվող թաքստոցում առկա առանձնապես խոշոր չափերով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցը շահադիտական դրդումներով իրացման նպատակով ձեռք բերելու վերաբերյալ, ինչն իրագործելու դիտավորությամբ Մոհսեն Ռահիմին, իր կողմից օգտագործված «Whatsapp» հավելվածում ստանալով «R+R+R+» գրառմամբ 508 գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի լուսանկարները, տեղեկացվելով նույն փաթեթում առանձին ևս մեկ՝ 25 գրամ քաշով փաթեթի առկայության և փաթեթը մեքենավարին տրված

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 15, թերթեր 115-119:

լինելու վերաբերյալ՝ նախնական համաձայնությամբ խմբի կազմում գործող Սևակ Զոհրանյանին 2024 թվականի սեպտեմբերի 22-ին տեղեկացնելով նշված թաքստոցի գտնվելու վայրի մասին՝ Սևակ Զոհրանյանի և վերջինի ազգական Ռաֆայել Ալեքսանի Խաչոյանի հետ վերջինի վարած «Nissan» մակնիշի «M 771 KO 750» ռուսական համարանիշի ավտոմեքենայով Երևան քաղաքից ուղևորվել են ըստ ստացած տեղորոշման և հասնելով նշված վայր՝ Սևակ Զոհրանյանը սպասել է ավտոմեքենայում՝ խմբի կազմում գործող Մոհսեն Ռահիմիին՝ վերջինի կողմից նշված չափի ու տեսակի թմրամիջոցը ձեռք բերելու և իր հետ խմբի կազմում դրա հետագա իրացումն իրականացնելու համար, ինչից հետո Մոհսեն Ռահիմին իրացնելու նպատակով փորձել է ապօրինի ձեռք բերել Արթուր Խաչատրյանի կողմից նշված վայրում գտնվող թաքստոցում տեղադրված «R+R» տարբերանշանով՝ ՀՀ Կառավարության «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերը (…) սահմանելու մասին» 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման հավելված N 1-ով հաստատված՝ թմրամիջոցների ցանկի 81-րդ կետով նախատեսված առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 487,47 (465,9+21,57) գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի փաթեթը, սակայն Սևակ Զոհրանյանի և Մոհսեն Ռահիմիի դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը վերջինների կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված չի իրագործվել, քանի որ վերջինները 2024 թվականի սեպտեմբերի 23-ին՝ ժամը 07:45-ի սահմաններում, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալվել և տեղափոխվել են ՀՀ ազգային անվտանգության ծառայության Արարատի մարզային վարչություն, իսկ հիշյալ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի փաթեթը հայտնաբերվել է 2024 թվականի սեպտեմբերի 23-ին Տիգրանաշենի ոլորանների միջնամասում կատարված դեպքի վայրի զննության ընթացքում: (…)»[4]*:*

5.4. 2025 թվականի ապրիլի 4-ի որոշմամբ Սևակ Զոհրանյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 44-393-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքի համար, որ *«նա*

[4] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 15, թերթեր 48-52:

նախնական համաձայնությամբ խմբի կազմում շահադիտական դրդումներով իրացնելու նպատակով փորձել է ապօրինի ձեռք բերել առանձնապես խոշոր չափերով թմրամիջոց:

(…)

Սևակ Սամվել Զոհրանյանը, խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների շրջանառության կանոնները սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 2010 թվականի մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, մասնավորապես՝ չունենալով բժշկական նպատակներով՝ բժշկի նշանակմամբ կամ օրենքով նախատեսված որևէ նպատակով թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու՝ թմրամիջոց ձեռք բերելու և իրացնելու թույլտվություն, նախնական համաձայնության է եկել Մոհսեն Հոսեյնալի Ռահիմիի հետ՝ Երևան-Երասխ-Մեղրի միջպետական ճանապարհի Տիգրանաշենի ոլորանների միջնամասում գտնվող թաքստոցում առկա առանձնապես խոշոր չափերով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցը շահադիտական դրդումներով իրացման նպատակով ապօրինի ձեռք բերելու վերաբերյալ, ինչն իրագործելու դիտավորությամբ նախնական համաձայնությամբ խմբի կազմում գործող Մոհսեն Ռահիմիից 2024 թվականի սեպտեմբերի 22-ին տեղեկանալով նշված թաքստոցի գտնվելու վայրի մասին՝ Մոհսեն Ռահիմիի և իր ազգական Ռաֆայել Ալեքսանի Խաչոյանի հետ վերջինի վարած «Nissan» մակնիշի «M 771 KO 750» ռուսական համարանիշի ավտոմեքենայով Երևան քաղաքից ուղևորվել են դեպի նշված թաքստոց և հասնելով նշված վայր՝ Սևակ Զոհրանյանը սպասել է ավտոմեքենայում՝ խմբի կազմում գործող Մոհսեն Ռահիմիին՝ վերջինի կողմից նշված չափի ու տեսակի թմրամիջոցը ձեռք բերելու և իր հետ խմբի կազմում դրա հետագա ապօրինի իրացումն իրականացնելու համար, ինչից հետո Մոհսեն Ռահիմին իրացնելու նպատակով փորձել է ապօրինի ձեռք բերել Արթուր Խաչատրյանի կողմից նշված վայրում գտնվող թաքստոցում տեղադրված «R+R» տարբերանշանով՝ ՀՀ Կառավարության «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր չափերը (…) սահմանելու մասին» 2018 թվականի հունիսի 27-ի թիվ 707-Ն որոշման հավելված N 1-ով հաստատված՝ թմրամիջոցների

ցանկի 81-րդ կետով նախատեսված առանձնապես խոշոր չափերով՝ ընդհանուր 487,47 (465,9+21,57) գրամ քաշով «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի փաթեթը, սակայն Սևակ Ջոհրանյանի և Մոհսեն Ռահիմիի դիրքավորության մեջ ընդգրկված հանցագործությունը վերջինների կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված չի իրագործվել, քանի որ վերջինները 2024 թվականի սեպտեմբերի 23-ին՝ ժամը 07:45-ի սահմաններում, հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալվել և տեղափոխվել են ՀՀ ազգային անվտանգության ծառայության Արարատի մարզային վարչություն, իսկ հիշյալ «Մարիխուանա» տեսակի թմրամիջոցի փաթեթը հայտնաբերվել է 2024 թվականի սեպտեմբերի 23-ին Տիգրանաշենի ոլորանների միջնամասում կատարված դեպքի վայրի զննության ընթացքում: (…)»[5]:

6. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քննարկելով պաշտպան Տ.Աբրահամյանի՝ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ միջնորդությունը, 2025 թվականի մայիսի 2-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Քրեական վարույթի ուսումնասիրությամբ պարզվում է, որ վարույթի մասնավոր մասնակիցները և մեղադրական եզրակացությամբ դատակոչված վկաների մեծամասնությունը ներկայումս բնակվում են Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքից դուրս: Վկաներ՝ Լիլիթ Լևոնի Մելքոնյանը, Վարուժան Ռաֆիկի Պետրոսյանը, Նարեկ Դավթի Գրիգորյանը, Ջոն Հարությունի Մելիքսեթյանը, վարույթի մասնավոր մասնակիցներ՝ մեղադրյալ Արթուր Սեյրանի Խաչատրյանի պաշտպաններ Տիգրան Աբրահամյանը և Միսակ Բաբաջանյանը, մեղադրյալ Պարգև Նվերի Վարդանյանը և վերջինիս պաշտպան Արմեն Ջոհրաբյանը, մեղադրյալ Սևակ Սամվելի Ջոհրանյանը և վերջինիս պաշտպան Ս.Քարամյանը, մեղադրյալ Էդգար Գագիկի Ջավրշյանը, մեղադրյալ Մոհսեն Հոսեյնալի Ռամինին (հատոր 2, վ.թ. 18) բնակվում են Երևան քաղաքում: Միայն մեղադրյալ Արթուր Խաչատրյանը (ՀՀ, Սյունիքի մարզ, Սիսիան համայնք), վկաներից Մարինե Մաղլենի Բաբաջանյանը (ՀՀ, Սյունիքի մարզ,*

[5] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 15, թերթեր 126-130:

Սիսիան, գ.Աղիտու), Կարեն Ռոբերտի Գաբրիելյանը (ՀՀ, Սյունիքի մարզ, ք. Կապան), Ռաֆայել Ալեքսանի Խաչոյանն (ՀՀ, Արմավիրի մարզ, ք. Այգեշատ բնակավայր) են բնակվում այլ վայրերում:

Պաշտպաններ Փափազ Ավագյանը (հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի՝ 21.04.2025թ որոշմամբ նշանակվել է մեղադրյալ Մոհսեն Հոսեյնալի Ռամինի պաշտպան) և Վահե Մարգարյանը (հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի՝ 21.04.2025թ որոշմամբ նշանակվել է մեղադրյալ Էդգար Ջավրշյանի պաշտպան), բնակվում են ք.Եղեգնաձորում: Հանրային պաշտպաններ Փափազ Ավագյանը և Վահե Մարգարյանը վարույթի մասնավոր մասնակիցներ են հանդիսանում, սակայն վարույթին ներգրավվել են հանրային կարգով:

Այսինքն՝ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը (18-ից 12-ը) բնակվում են առաջին ատյանի մեկ այլ դատարանի՝ մասնավորապես՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

Բացի այդ, չնայած այն հանգամանքին, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261–րդ հոդվածի 5–րդ մասի համաձայն՝ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու համար անհրաժեշտ է, որպեսզի վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվեն առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում, Դատարանը փաստում է նաև, որ վարույթին օժանդակող անձ՝ թարգմանիչ Ռ.Թահմասյանը նույնպես բնակվում է ք. Երևանում:

Նախնական դատաքննության ժամանակ պաշտպանական կողմը միջնորդություն է ներկայացրել քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ, հանրային մեղադրող Ա.Սահակյանը չի առարկել ներկայացված միջնորդության դեմ (սույն քրեական վարույթով մեղադրական եզրակացությունը հաստատել է ՀՀ գլխավոր դատախազության բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության դատախազ Կ.Այվազյանը): Դատարանը փաստում է, որ սույն քրեական գործով դեռևս հիմնական դատաքննություն նշանակելու մասին որոշում չի կայացվել, հետևաբար որևէ ապացույց չի հետազոտվել և ընդդատությունը փոխելով չի տուժի

նաև արդարադատության շահը, ավելին՝ կապահովվի քրեական գործը ողջամիտ ժամկետում քննության առնելու վերաբերյալ սկզբունքը:

Վերոգրյալի հիման վրա Դատարանը գտնում է, որ բավարարված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու համար սահմանված պահանջները, ինչով էլ պայմանավորված՝ Դատարանը որոշում է մեղադրյալ Արթուր Խաչատրյանի պաշտպան Տիգրան Աբրահամյանի միջնորդությունը բավարարել, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և այն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան: (…)»[6]*:*

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի մայիսի 20-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(…) Սույն գործի փաստական հանգամանքները գնահատելով վերը շարադրված իրավական նորմերի համատեքստում՝ հարկ է արձանագրել, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փոխելով վարույթի տարածքային ընդդատությունը, առերևույթ չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, վարույթի նյութերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ վարույթի մասնավոր մասնակիցներից 4 մեղադրյալները չեն բնակվում Երևան քաղաքում, քանզի վերջիններիս, ինչպես նաև մեղադրյալ Արթուր Խաչատրյանի նկատմամբ ընտրված է կալանքը որպես խափանման միջոց, և այն կրում են Արմավիր քրեակատարողական հիմնարկում (Արմավիրի մարզ): Իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ սահմանված տարածքային ընդդատության փոփոխությունը, որպես ընդհանուր կանոնից բացառություն, հնարավոր է կատարել, երբ վարույթի հիշյալ մասնակիցների մեծամասնությունը փաստացի բնակվում են /և ոչ թե բնակվել են/ այլ դատարանի տարածքում, ինչը կնպաստի վարույթի արագ քննմանը և ողջամիտ ժամկետում վարույթի ավարտմանը:*

---

[6] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 16, թերթեր 155-161:

Այլ կերպ, ստացվում է, որ վարույթի մասնավոր մասնակիցներից և վկաներից (ընդհանուր թվով 18 անձ) միայն 8-ն (4 պաշտպան՝ Տ.Աբրահամյանը, Մ.Բաբաջանյանը, Ա.Զոհրաբյանը, Ս.Քարամյանը, և 4 վկա՝ Լ.Մելքոնյանը, Վ.Պետրոսյանը, Ն.Գրիգորյանը, Զ.Մելիքսեթյանը) են բնակվում Երևան քաղաքում: Հետևաբար, չի հաստատվում վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնության՝ Երևան քաղաքի դատական տարածքում բնակվելու հանգամանքը:

Ինչ վերաբերում է որոշմամբ նշված այն հանգամանքին, որ Եղեգնաձոր համայնքում բնակվող հանրային պաշտպաններ Փափազ Ավագյանը և Վահե Մարգարյանը վարույթի մասնավոր մասնակիցներ են հանդիսանում, սակայն վարույթին ներգրավվել են հանրային կարգով, ապա հարկ է նկատել, որ հանրային պաշտպանները ևս վարույթի մասնակիցներ են, ավելին՝ ընդդատության փոփոխության պարագայում պոտեղում է նաև ողջամիտ ժամկետում գործի քննությունն այն պարզ պատճառով, որ վարույթին ներգրավվելու են նոր հանրային պաշտպաններ, որոնք ողջամտորեն ունենալու են անհրաժեշտություն ծանոթանալու շուրջ 15 հատոր նյութերին:

Ամփոփելով ասվածը՝ Դատարանը եզրահանգում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքն առերևույթ բացակայում է, ուստի անհրաժեշտ է թիվ ԱՎԴ1/0089/01/25 վարույթն ուղարկել Վճռաբեկ դատարանի քրեական պալատ՝ վարույթի տարածքային ընդդատության հարցի որոշման համար: (…)»:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՎԴ1/0089/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի

առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[7]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[8]:

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա*

---

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[8] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[9]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

---

[9] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատալսումներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում, նախնական դատալսումների ընթացքում, պաշտպան Տ.Աբրահամյանը միջնորդել է սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխել և վարույթը փոխանցել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան[10]:

[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 16, թերթ 116, դատական նիստի արձանագրություն, թերթեր 130-132:

- Սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու վերաբերյալ վերոնշյալ միջնորդությանը միացել են նաև պաշտպաններ Ս.Քարամյանը և Ա.Զոհրանյանը[11]:

- Մեղադրյալներ Ա.Խաչատրյանը, Է.Ջավրշյանը, Պ.Վարդանյանը, Մ.Ռահիմին, Ս.Զոհրանյանը իրենց համաձայնությունն են հայտնել, որպեսզի քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխվի և վարույթը փոխանցվի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան[12]:

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում, բացի այդ դատակոչված թարգմանչի բնակության վայրը նույնպես Երևան քաղաքն է, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը նշել է նաև, որ սույն վարույթով դեռևս հիմնական դատալսումներ նշանակելու մասին որոշում չի կայացվել, հետևաբար վարույթի ընդդատությունը փոխելով չի տուժի նաև արդարադատության շահը, ավելին՝ կապահովվի քրեական գործը ողջամիտ ժամկետում քննության առնելու սկզբունքը[13]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրված կալանքը, որը վերջիններս կրում են ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, գտել է, որ վարույթի մասնավոր մասնակիցներից և վկաներից միայն ութն են բնակվում Երևան քաղաքում, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի

---

[11] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 16, թերթեր 123,125:
[12] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 16, դատական նիստի արձանագրություն, թերթեր 130-132:
[13] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

5-րդ մասով սահմանված քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքն առերևույթ բացակայում է[14]:

15. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, քրեական վարույթի տարածքային ընդդատությունը մեղադրյալների համաձայնությամբ փոխել և վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան է փոխանցել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջների պահպանմամբ: Մասնավորապես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալներ Մ.Ռահիմի[15], Պ.Վարդանյանի[16], Է.Ջավրշյանի, Ս.Զոհրանյանի, պաշտպաններ Տ.Աբրահամյանի, Մ.Բաբաջանյանի, Ա.Զոհրաբյանի, Ս.Քարամյանի, վկաներ Լ.Մելքոնյանի, Վ.Պետրոսյանի, Ն.Գրիգորյանի, Ջ.Մելիքսեթյանի բնակության վայրն է Երևան քաղաքը, մեղադրյալ Ա.Խաչատրյանի, վկաներ Մ.Բաբաջանյանի, Կ.Գաբրիելյանի բնակության վայրը՝ Սյունիքի մարզը, վկա Ռ.Խաչոյանի բնակության վայրը՝ Արմավիրի մարզը[17], պաշտպաններ Փ.Ավագյանի և Վ.Մարգարյանի բնակության վայրը՝ Վայոց ձորի մարզը[18]: Այսինքն, սույն վարույթին ներգրավված են տասնութ մասնավոր մասնակիցներ և վկաներ, որոնց մեծամասնությունը՝ տասներկու անձ, բնակվում է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատական տարածքում:

Ինչ վերաբերում է մեղադրյալների՝ ՀՀ արդարադատության նախարարության «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում պահվելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատողությանը, ապա հարկ է նշել, որ թեև մեղադրյալները ներկայում կալանքի տակ են գտնվում «Արմավիր» քրեակատարողական հիմնարկում, սակայն ինչպես

---

[14] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:
[15] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 2, թերթ 18, հատոր 16, դատական նիստի արձանագրություն, թերթեր 130-132:
[16] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 4, թերթ 8:
[17] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 15, թերթեր 314-315:
[18] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 16, թերթեր 104, 144:

համապատասխան քրեակատարողական հիմնարկը, որտեղ պահվում են վերջիններս, այնպես էլ կիրառված խափանման միջոցը, վարույթի ընթացքում կարող են փոփոխվել, հետևաբար նշված հանգամանքը վերոգրյալ փաստական տվյալների պարագայում, հաշվի առնելով նաև արդարադատության շահը և գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջը, չի կարող որոշիչ լինել սույն վարույթի ընդդատության հարցը լուծելիս:

16. Վերոշարադրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՎԴ1/0089/01/25 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան փոխանցելու մասին որոշումը հիմնավոր է:

17. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը գտնում է, որ սույն քրեական վարույթն ըստ ընդդատության պետք է ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԱՎԴ1/0089/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ